Ընդհարումների և կռիվների թատերաբեմ դարձաւ և Կարսի նահանգը։ Օգոստ. 18–ին մօտ 1500 զինուած քրդեր ու թուրքեր յարձակուեցին Կաղզուանի վրա, բայց յետ մղուեցին։ Օգոստ. 21–ից սկսուեցին մի շարք ընդհարումներ քիւրդերի և հայկական կանոնաւոր ուժերի միջև։ Օգ. 22–ին 400 թուրքեր գրաւեցին Բայքարա գիւղը, Սելիմից 15 վերստի վրա՝ կամենալով փչացնել երկաթուղին Բէգլի–Ահմէդի մօտ և կտրել Սարըղամիշի հայկական զօրամասի հաղորդակցութեան գիծը։ Դևիկի մօտ քրդերը գնդակահարեցին անգլիական մի ինքնաշարժ և վիրաւորեցին մի զինուոր*)։ Հայկական հողերի վրա երևացին և թիւրքական ուժեր։

Օգոստ. 30–ին, Սարըղամիշի հայկական զօրամասերը անցան հակայարձակման և յաջող կռիւներով յետ շպրտեցին թշնամուն ու գրաւեցին նրա դիրքերը Կարաքուրդի շրջանում։ Օգոստ. 31–ին Դևիկի հայկական մասերը գրաւեցին Վերիշան, Բաշքէոյ, Բէգքէոյ, Բոզղուտ և Մեխրետ գիւղերը. քրդերը փախան՝ ջարդուած։ Նոյն օրը Կարաքուրդի զօրամասը գրաւեց Բաշքէոյի դիրքերը և մինչև 1914թ. սահմանը մաքրեց քրդերից։ Անյաջող անցաւ նոյնպէս թշնամու փորձը՝ գրաւելու Կաղզուանը. մեծ զոհեր տալով՝ փախաւ խուճապահար։

Սեպտ. 1–ին քրդերն ու թուրքերը շրջապատեցին Կոնդ և Դորդ Կիլիսա գիւղերը և Մերդենեկի զօրամասի պետից պահանջեցին՝ մաքրել անյապաղ Մերդենեկի շրջանը և զօրքերը հեռացնել Կարս։ Պատասխանը եղաւ՝ յարձակում Մերդենեկի զօրքերի կողմից և թշնամու փախուստը դէպի Կանջուրետի լեռները։ Սեպ. 2–ին Սարըղամիշի հայկական զօրամասը կուռվ գրաւեց Գումրի սարն ու Ղզել Կիլիսա գիւղը։ Ապստամբների ղեկավար Էյուբ փաշան փախաւ Օլթիի շրջանը, իսկ մի ուրիշ ղեկավար անձնատուր եղաւ։

Այսպիսով, իբրև հետևանք հայկական զէնքի յաջողութեան, մահմետական շարժումը Կարսի նահանգում վերջ գտաւ։ Դրան նպաստեց և այն զգոյշ ու հաշտասէր քաղաքականութիւնը, որ վարում էր այստեղ հայկական իշխանութիւնը։ Այնուհետև, եթէ չհաշուենք 1920 թուի սկզբի Զարուշատի դէպքերը, Կարսի շրջանում լուրջ հակապետական դէպքեր տեղի չունեցան։

*

Մահմետական շարժումների ամենատաք շրջանին Հայաստան հասաւ Հաշտութեան Վեհաժողովի Հնդի Խորհրդի կողմից նշանակուած՝ Հայաստանի կոմիսար գնդ. Ուիլիամ Հասկելը։ Նրա նշանակումը մեծ ոգևորութիւն

*) Հակառակ Մուդրոսի զինադադարի, թիւրքերը շարունակում էին թշնամութիւնը անգլիացիների դէմ։ Այսպէս, յուլիսին անգլիացիք իրենց ձեռքն էին առել Էրզրումը, զինաթափել էին քաղաքը և յուլիսի վերջերին սկսել դուրս տանել բերդի զէնքն ու ռազմամթերքը։ Երբ Էրզրումից դուրս եկաւ առաջին գնացքը՝ բեռնաւորուած 15 թնդանօթով, 500 հրացանով և մէկ միլիոն փամփուշտով, քաղաքից ոչ հեռու, մի խումբ թիւրք զինուորներ յարձակուեցին նրա վրա, զինաթափ արին անգլիացի պահակներին և գնացքը դարձրին Էրզրում։ Անգլիացիք մարսեցին այս անպատուութիւնը, ինչպէս մարսեցին և շատ ուրիշ, աւելի ծանր անպատուութիւններ։